ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 200 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 7-Ի N 444-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00861992) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2025 թվականի հուլիսի 7-ի «Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Կենսաբազմազանություն և կայուն տեղական զարգացում Հայաստանում» ծրագրի մասին» N 444-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՍԻՓԻԷՍ ՋԵՆԵՐԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 02915547) 2026 թվականի մարտի 16-ին կնքված՝ N 02/26-AM0034 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Պրեմիում ԱԻ-95-Կ5» վառելիքի ձեռքբերում՝ 2,300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ (ՀՎՀՀ՝ 00804807) 2026 թվականի մարտի 16-ին կնքված՝ N 03/26-AM0034-DF

պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2026 թվականի ապրիլի 26-29-ն ընկած ժամանակահատվածում միջոցառման կազմակերպման ծառայությունների մատուցում՝ 1,479,167 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

07.04.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ